


Հաստատում եմ՝

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր՝ Ե. Սերոբյան

« 08 » սեպտեմբերի 2023թ .



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քրիստինե Համլետի Մեծույանի «Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարությունները» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

Անվիճելի է թեմայի արդիականությունը, քանի որ ատենախոսը սույն հետազոտությունում փորձ է արվում որոշարկել բժշկական ենթալեզվի իմաստագործառական և ոճական առանձնահատկությունները խոսույթի սահմանում, մասնակիորեն բժիշկ-հիվանդ հաղորդակցական տիրույթում և սահմանել բժշկական ենթալեզվի ուսուցման ռազմավարությունները հենց այս երկուսի կիզակետում: Անմիջապես նշենք, որ հեղինակին այն հաջողվել է:

Հետազոտության մեթոդական հենքը խոսուն է, քանի որ խարսխվում է հաղորդակցական-ճանաչողական, հանրամշակութային, խոսույթային, կոմպլեքսիտային տեսությունների վրա: Աշխատանքը արժևորվում է նաև գործնական տեսանկյունից, քանի որ հետազոտության գործնական շավիղները, մշակված վարժությունների համակարգը, իր առաջադրանքների արհեստավարժ ընտրության սկզբունքներով, կարող է հաջողությամբ կիրառվել մասնագիտական անգլերենի դասընթացում՝ այդ դասերի վերջնարդյունքների ստուգման ու գնահատման համար:

Տրամաբանական է աշխատանքի կառուցվածքը, երբ բժշկական բառապաշարի շերտավորումների սահմանմանը հաջորդում է բժշկական բառակապակցությունների քննությունը, մասնավորապես բառի ու հասկացույթի հակադրմամբ և այս դաշտն էլ ընդլայնվում է անգլերեն բժշկական ենթալեզվի թևավոր խոսքով, ասացվածքով և հատկաբանություններով: Չեն անտեսվում ինչպես հականիշները, այնպես էլ հոմանիշային շարքերը և այս շղթաներում իշխող բառային հարաբերությունները՝ իրենց ոճական մկրտումներով: Մասնագիտական բառապաշարի շտեմարանում իրենց արժանի քննությունն են ստանում հասկացութային փոխհարաբերությունները և բառային միավորների կապակցելիության կադապարումները:

Վերլուծությանը համակարգված բնույթ են հաղորդում նմանապես բժշկական ենթալեզվում «ծպտորեն կողավորված» լեզվական միավորների առանձնահատկությունները և դրանց ուսուցման ռազմավարությունները:

Աշխատանքի մեծագույն արժեքներից է բառապաշարի ուսուցման ռազմավարությունների համալիր քննությունը, որ բանաձևվում է ընթերցանության, բանավոր խոսքի, գրավոր խոսքի ուսուցման, ուսումնառության ռազմավարությունների համադրմամբ, և այս համադրումը իրացվում է ճանաչողական-հաղորդակցական մոտեցման համատեքստում: Սույն հիմնախնդիրը իր ողջ ընդգրկվածությամբ, ծավալայնությամբ քննության է առնվում միջառարկայական և ներառարկայական կապերի առանցքում:

Կանխատեսվում է խոսույթային փոխներթափանցման գոտին, բժշկական տեքստի ուսուցման դժվարությունները հայախոս լսարանում և սահմանում է դրանց հաղթահարման ռազմավարությունները: Կարևորվում է բժշկական տեքստի և խոսույթի ուսուցման ռազմավարությունների ուրվագծումը: Անվիճելի է ատենախոսի այն պնդումը, որ. « Խոսույթը լինելով դինամիկ կառույց, նպաստում է փոխներգործուն մեթոդների կիրառման մանկավարժական պայմանների բարելավմանը» /Ատ., էջ 76/: Խոսույթի դիտանկյունից բժշկական ենթալեզվի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ընդլայնել նրա ուսումնասիրության դաշտը՝ ներառելով բժկական հոդվածի , բուկլետի, հարցազրույցների ուսումնասիրությանը: Եվ սրանով ձևավորվում է ուսանողի մոտ մշակույթ աշխատելու գիտաբժշկական գրականության հետ:

Ռազմավարությունների շրջանակում առանձնապես կարևորվում է առաջադրանքների ընտրության սկզբունքները, որոնք խարսխվում են բնագրային լեզվի վրա: Առաջարկվող բոլոր հանձնարարականների հիմքում ընկած է հաղորդակցական նպատակը՝ հաղորդակցական հմտությունների ձևավորումը և զարգացումը:

Հատուկ ուշադրության են արժանի ներկայացված հավելվածները, որոնք լրացնում են բժշկական ենթալեզվի ներկնապնակը:

Եվ այսպես, մասնագիտական բառային փոխներթափանցումների հաղթահարմանը միտված աշխատանքները շատ են, սակայն ստվերում են մնացել մշակույթային, խոսույթային փոխներթափանցմանը միտված հետազոտությունները: Սույն ատենախոսությունը կոչված է լրացնելու այս պակասը, և բացում է արահետներ նմանատիպ միտվածությամբ այլ ենթալեզուների ուսումնասիրության համար:

Կուզենայինք նաև անել որոշակի դիտարկումներ առաջարկների տեսքով.

- Ատենախոսության էջ 19-31 ներկայացված բժշկական եզրույթների բառարանը ցանկալի կլիներ ներկայացնել առանձին հավելվածով, քանի որ այն խախտում է շարադրանքի տրամաբանությունը:
- Ուսուցման տեսակետից արդյունավետ կլիներ զուլխ I II և հավելվածներում բերված բժշկական ենթալեզվի օրինակներին հաջորդելին ոչ միայն անգլերեն մեկնությունները, այլ նաև դրանք համալրվելին հայերեն համարժեքներով:
- Աշխատանքը առավել շահեկան կլիներ, եթե հիվանդ-բժիշկ հաղորդակցությունների խոսույթում առանձնապես կենտրոնանալին լեզվական կարծրատիպերի մշակույթային արժևորումներին և դրանց ուսուցման ռազմավարություններին:

Սակայն վերոհիշյալ դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քրիստինե Համլետի Մեծլումյանի «Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարությունները» թեմայով թեկնածուականատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր ԺԳ.00.02-«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու)» թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընունվել է 2023թ. սեպտեմբերի 7-ի «Օտար լեզուների և գրականություն» ամբիոնի թիվ 3 նիստում:

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ.

Բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝

Ա. Հովհաննիսյան

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ Ա. Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ կ.գ.թ., դոցենտ՝

Կ. Պետրոսյան



08.09.2023թ.